ՀՈՒՇԱԳԻՐ

ՀՀ-ում տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) ոլորտի վարչական ռեգիստրի կայացման նպատակով սկզբնական տեղեկությունների էլեկտրոնային հավաքագրումը կազմակերպելու մասին

ք. Երևան **«27» հոկտեմբեր 2010թ.**

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն), ի դեմս նախարար Ներսես Երիցյանի, որը գործում է Նախարարության կանոնադրության հիման վրա, ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը (այսուհետ՝ ՀՀ ԱՎԾ), ի դեմս նախագահ Ստեփան Մնացականյանի, որը գործում է ՀՀ ԱՎԾ կանոնադրության հիման վրա, Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ), ի դեմս գործադիր տնօրեն Բագրատ Ենգիբարյանի, որը գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա, Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությունը (այսուհետ՝ Միություն), ի դեմս տնօրեն Կարեն Վարդանյանի, որը գործում է Միության կանոնադրության հիման վրա, Էլ. բովանդակության ասոցիացիան (այսուհետ՝ ԷԼԲԱ), ի դեմս նախագահ Գարեգին Չուգասզյանի, որը գործում է ԷԼԲԱ-ի կանոնադրության հիման վրա, Եռաչափ մոդելավորման միությունը (այսուհետ՝ Ասոցիացիա), ի դեմս նախագահ Գուրգեն Պարոնյանի, որը գործում է Ասոցիացիայի կանոնադրության հիման վրա (միասին այսուհետ՝ Կողմեր) ՝

Հաշվի առնելով

- ՀՀ կառավարության կողմից ՏՏ ոլորտը գերակա ճյուղ հայտարարված լինելու հանգամանքը և այդ ոլորտի զարգացումը խթանելու ուղղությամբ իրականացվող քայլերը,
- ՀՀ կառավարության կողմից էլեկտրոնային կառավարում ստեղծելու ուղղությամբ իրականացվող աշխատանքները,
- գործարար միջավայրի բարելավմանը և բիզնես կարողությունների զարգացմանն օժանդակող պարզեցված ծառայությունների ցանցի՝ գործիքների ստեղծման անհրաժեշտությունը,

Առաջնորդվելով այն նկատառումներով, որ Կողմերն իրենց վերապահված լիազորություններով հետապնդում են նաև տեղեկատվության հավաքագրման, վերլուծությունների և կառավարման, էլեկտրոնային հաշվառման ու վիճակագրության ներդրման, Հիմնադրամում ձևավորված ԱյՍիԹի Ստատ (այսուհետ՝ ICT Stat) համակարգի կատարելագործման միասնական նպատակ, ինչը հնարավորություն կընձեռի ՏՏ ոլորտի ընկերություններին համացանցով (ինտերնետով), առցանց ռեժիմում իրականացնել պահանջվող (հայցվող) տեղեկատվության (հաշվետվությունների, հարցաթերթերի) տրամադրում և

Ելնելով ամրագրված միասնական նպատակից, առաջնորդվելով փոխադարձ վստահության սկզբունքով, փոխգործակցության ոգով և հարգելով կողմերի համար սահմանված իրավական պարտավորությունները՝ կողմերը կնքեցին սույն հուշագիրը հետևյալի մասին.

1. Սույն Հուշագրով Կողմերը սկսում են համագործակցություն ՏՏ գործունեության տեսակով զբաղվող տնտեսավարող սուբյեկտների վերաբերյալ անվանական (հասցեական) տեղեկատվական միասնական շտեմարանի (վարչական ռեգիստրի) ձևավորման ու վարման և դրանից օգտվելու (այդ թվում՝ վիճակագրական նպատակով կիրառելի) գործընթացի կայացմանը նպաստելու նպատակով:

2. Կողմերը կձեռնարկեն համապատասխան միջոցառումներ SS ոլորտի ընկերությունների կողմից ներկայացվող վարչական հաշվետվությունների մշակման, հաստատման և դրանց էլեկտրոնային հավաքագրումը կազմակերպելու համար, մասնավորապես սկսելով Հիմնադրամում ձևավորված ICT Stat էլեկտրոնային միջավայրի փորձնական աշխատանքներից:

3. Կողմերը համաձայնվում են համագործակցել ICT Stat համակարգի կայացման շրջանակներում և նպաստել այդ համակարգի արդյունավետության և թափանցիկության բարձրացմանը՝ ձգտելով հասնել հավաքագրված տվյալների (SS ոլորտի վարչական ռեգիստրի) ամբողջականությանը և համակարգի միջոցով հավաքագրված արդյունքների նկատմամբ վստահությանը:

4. ՀՀ ԱՎԾ-ն, կարևորելով երկրում վարչական ռեգիստրների ներդրումն ու կատարելագործումը, պատրաստակամություն է հայտնում ցուցաբերել մեթոդաբանական օժանդակություն իրականացվող, այդ թվում՝ և՛ վարչական, և՛ վիճակագրական նպատակներով համապատասխան ցուցանիշների կազմով և կառուցվածքով վարչական հաշվետվական ձևերի մշակման ու հաստատման աշխատանքներին, ինչպես նաև համակարգի փորձարկման արդյունքներն օգտագործել պետական վիճակագրական աշխատանքներում՝ որպես այլընտրանքային աղբյուր, մինչ SS ոլորտի վարչական ռեգիստրի վերջնական կայացումը, որի ավարտից հետո ամբողջապես անցում կկատարի այդ աղբյուրին:

5. Հիմնադրամը, Միությունը, ԷԼԲԱ-ն և Ասոցիացիան կաջակցեն Նախարարությանը SS ոլորտի ընկերությունների կողմից SS ոլորտի վարչական ռեգիստրի կայացման համար անհրաժեշտ վարչական հաշվետվական տեղեկատվության հավաքագրման և վերլուծության գործում:

6. Հիմնադրամը, Միությունը, ԷԼԲԱ-ն և Ասոցիացիան իրենց պատրաստակամությունն են հայտնում աջակցել Նախարարությանը վարչական ռեգիստրի ձևավորման համար անհրաժեշտ ցուցանիշների շրջանակի նախանշման, ստացված տվյալների վերլուծության, ինչպես նաև մեթոդաբանության մշակման և SS ոլորտի առանձնահատկությունների բացահայտման նպատակով:

7. Սույն հուշագրի շրջանակում SS ոլորտի ընկերությունները մինչ SS ոլորտի վարչական ռեգիստրի վերջնական կայացումը շարունակում են ՀՀ ԱՎԾ ներկայացնել պետական վիճակագրական հաշվետվությունները՝ «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

8. Սույն հուշագրի կնքման և կատարման հետ կապված Կողմերի փոխհարաբերությունները բնութագրվում են միմյանց նկատմամբ ցուցաբերվող հատուկ վստահությամբ, այն է Կողմերը պետք է փորձեն Հուշագրի շուրջ ծագող ցանկացած տարաձայնություն, կարգավորել փոխշահավետ ճանապարհով՝ բանակցությունների միջոցով, եթե ՀՀ գործող օրենքներով այլ բան նախատեսված չէ:

9. Սույն հուշագրի փոփոխություններն ու լրացումները կարող են կատարվել բացառապես Կողմերի գրավոր համաձայնությամբ, որը կհանդիսանա սույն հուշագրի անբաժանելի մասը:

10. Հուշագիրն անժամկետ է և Կողմերից յուրաքանչյուրն իրավասու է միակողմանի դադարեցնել Հուշագրով ստանձնած պարտավորությունների կատարումը՝ այդ մասին առնվազն մեկ ամիս առաջ գրավոր տեղեկացնելով Հուշագրի մյուս Կողմերին:

11. Կողմերը հաստատում են, որ սույն հուշագրի կնքումը և կատարումը լիովին բխում և համապատասխանում է իրենց շահերին:

12. Կողմերը հավաստում են, որ սույն հուշագրի կնքման պահին նրանց հայտնի չեն այնպիսի հանգամանքներ, որոնց հետևանքով իրենք իրավասու կամ ի վիճակի չեն եղել կնքել կամ կատարել սույն հուշագիրը:

13. Սույն հուշագիրը բաղկացած է 3 (երեք) էջից, կազմված է հայերեն և կնքվում է 6 (վեց) հավասարազոր օրինակից՝ յուրաքանչյուր Կողմին մեկական օրինակ:

14. Սույն հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրման պահից:

Կողմերի վավերապայմաններն ու ստորագրությունները

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

Նախարար

Ներսես Երիցյան

ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն

Նախագահ

Ստեփան Մնացականյան

Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ

Տնօրեն

Բագրատ Ենգիբարյան

Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն

Տնօրեն

Կարեն Վարդանյան

Էլ. բովանդակության ասոցիացիա

Նախագահ

Գարեգին Չուգասզյան

Եռաչափ մոդելավորման միություն

Նախագահ

Գուրգեն Պարոնյան